



# Ազգարարութեան Trumpet's Sound փող

54-րդ ՏՐԻ, ԱՒՍՏՐԱԼԻԱ  
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2023



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»  
Երկամսյա հոգեւոր քերթ

Պատասխանատու խմբագիր՝  
հովիտ Հրաչ Գոյցուճեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



## Բովանդակութիւն

Սուրբ Եղիշ, քանզի Ես սուրբ Եմ . . . . .	<b>3</b>
<i>Հովիտ Հրաչ Գոյցուճեան</i>	
Փարաւոնը զիջումներ կ'առաջարկէ . . . . .	<b>5</b>
<i>Տնա Մրումը</i>	
Օգնութիւն կը փնտռեմ . . . . .	<b>8</b>
<i>Նէլլ Պորման</i>	
Սուրբ Յոգևոյն ներգործութիւնը . . . . .	<b>11</b>
<i>Դափիր Տօրորինան</i>	
Յայաստանի ՄԱԾ . . . . .	<b>14</b>
<i>ՄԱԾ</i>	
Յարութիւնը կարելի չէ կեցնել . . . . .	<b>16</b>
<i>Քաղուած</i>	

- Փառարաննեցէք Տիրոջը Իր բոլոր բարութեան համար:
- Ծնորհակալութիւն յայտնեցէք Տիրոջը Յայաստան ուղարկուելիք 25-րդ թերութեան համար:
- Աղօթեցէք Լիբանանի, Սուլիայի եւ Յայաստանի մէջ մեր հոգատարութեան տակ գտնուող կարիքաւոր ընտանիքներուն համար:
- Աղօթեցէք Մարտունի, Անժէլայի եւ անոնց զաւակներու համար, որոնք շուտով Աւստրալիա պիտի այցելեն:
- Աղօթեցէք «ԱՍՄ»-ի 25-րդ ամեակի տօնակատարութեան համար:
- Աղօթեցէք բոլոր անոնց համար ովքեր Յուլիս – Օգոստոս ամիսներուն պիտի միանան Յայաստան մեկնող միսիոներական խումբին:

Կազմի նկարը՝ Երկուորեակ Քիմկ Շորճ  
Չովեծ, Քիմակերի, Աւստրալիա

**Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:**

## **Սո՛ւրբ Եղիք, քանզի ես սուրբ Եմ**

**Պ**րայս Աստուծոյ զաւակներ, մենք կանչուած ենք սրբութեան կեանքն ապրելու: Ոմանք կը խորհին, թէ սրբութիւնը անցեալի հաւատացեալներու համար է, Աստուծաշնչեան ժամանակներու համար է, իսկ ուրիշներ կը խորհին, թէ սուրբը արձան է կամ սրբապատկեր: Որպէս Տէր Յիսուս Քրիստոսի հետեւորդներ բոլոր հաւատացեալները կանչուած են սուրբ ըլլալու: Աստուծաշնչը շատ յստակ կ'ըսէ.

- «Սո՞ւրբ Եղիքյուներ, Երկնային կոչումին մասնակիցներ, նայեցէք մեր դաւանութեանը Առաքեալին ու Քահանայապետին, Քրիստոս Յիսուսին» (Եբր. 3:1):
- «Ուստի Աստուծոյ լճատրեալ սուրբներու եւ սիրելիներու պէս....» (Կող. 3:12):

### **Ի՞նչ կը նշանակէ սուրբ ըլլալ**

Սուրբ ըլլալ կը նշանակէ առանձնացուած, զատուած, Աստուծոյ կողմէն օգտագործուելու համար մէկ կողմ դրուած ըլլալ:

Սուրբ կեանքով ապրիլ կը նշանակէ, որ մեր ամէն ինչը Իրեն կը յանձնենք եւ ամէն օր կը քալենք Իր սրբութեամբ՝ բոյլ տալով Իրեն ամբողջովին փոխել ու Իր պատկերի նմանութեամբ ձեւատրել մեզ:

Սուրբ կեանքով ապրիլը պատուիրան է:

Աստուծ պատուիրած է մեզ սուրբ ըլլալ:

Ամէն ջանք գործադրէք բոլորի հետ խաղաղ ապրելու եւ սուրբ ըլլալու համար: «Խաղաղութեան ետեւէ Եղիք ամէնուն հետ եւ սրբութեան, առանց ասոր մէկը պիտի չտեսնէ Տէրը» (Եբր. 12:14): «Հապա ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ Եղիք ձեր բոլոր վարմունքներուն մէջ: Վասն զի գրուած է. «Սո՞ւրբ Եղիք, քանզի ես սուրբ Եմ»» (Ա Պետ. 1:15-16):

Երբ կը հնազանդուինք Աստուծոյ պատուիրանին, մեր կապը Իր հետ կ'ամրապնդուի, որու արդիւնքով Ան Իր Անձը մեզ աւելի կը յայտնի:

Բայց մենք պէտք է ամէն օր ապահնինք Իրեն, քանի որ մեր սրբութիւնը ոչ թէ մեր կարողութեամբ է այլ՝ Անոր կարողութեամբ:

## **Սրբութիւնը Աստուծմէ է**

Դուք չէք կրնար ձեր անձը սրբացնել: Սրբութիւնը Աստուծմէ է:

Որքան մօտենանք Քրիստոսին, այնքան աւելի կը մաքրուինք, քանի որ Ան Աստուծոյ հետ հաշտեցուց մեզ: Մենք չենք կրնար մեր անձերը մաքրել, միայն Աստուած կրնայ այդ ընել:

«Վասն զի Աստուած զանիկա որ մեղք չէր գիտեր, մեզի համար մեղանոր սեպեց, որպէս զի մենք անոր միջոցով Աստուծոյ արդարներն ըլլանք» (Բ Կորնթ. 5:21):

## **Սուրբքային որոշ հատուածներ խորհրդաժելու համար**

- «Եւ ձեզ ալ՝որ ատեն մը օտարացած էիք ու չար գործերով թշնամիներ՝ ձեր խորհուրդներով, Հիմա հաշտեցուց բուն իր մարմնով՝ մահուամբ, որպէս զի ձեզ անոր առջեւ սուրբ ու անիթծ եւ անարատ կայնեցնէ» (Կող. 1:21-22):
- «Որ մեզ փրկեց ու սուրբ կոչումով կանչեց, ո՛չ թէ մեր գործերուն նայելով, հապա իր նախասահմանութեանը եւ շնորհին նայելով, որ Քրիստոս Յիսուսով մեզի տրուեցաւ յաւիտենական ժամանակներէն առաջ» (Բ Տիմ. 1:9):
- «Ինչպէս մեզ անով աշխարհի սկիզբէն առաջ ընտրեց, որպէս զի մենք սիրով սուրբ ու անարատ ըլլանք իր առջեւ» (Եփես. 1:4):

Աստուած ձեզ սուրբ դարձուց եւ սրբութեամբ քալելու կարողութիւն տուաւ: Այնուամենայնիւ այն ձեր կեանքին մէջ չի դրսեւորուի, եթէ Իրեն հնազանդելու եւ իր հետ քալելու յատակ որոշում չկայացնէք:

Կ' աղօթեմ, որ ձեր սրտի աշքերը լուսաւորուին, որպէսզի լիովին ընդունիք Աստուծոյ արդարութեան պարգեւը: Եւ մինչ այդպէս կ' ընէք, ես կ' աղօթեմ, որ դուք Սուրբ Հոգիի օգործեամբ ապրիք սրբութեան կեանքը՝ Աստուծոյ համար առանձնացուած:

Հ. Գ.

## Փարաւոնը զիջումներ կ'առաջարկէ

**Ն**ախորդ սերտողութեան մէջ քննարկեցինք երկու ուղիներ, որոնցով փարաւոնը Աստուծոյ դիմադրեց: Ան օգտագործեց իր կախարդներուն՝ ընդօրինակելու այն, ինչ Աստուած կ'ընէր, եւ Ան խրստացրեց իր սիրտը Տիրոջ դէմ ու մերժեց հնազանդիլ Իրեն: Այժմ Ան մարդկային զիջումներ առաջարկելով կը փորձէ Աստուծոյ յաղթել:

### Դժկամ զիջումներ

Սկիզբը փարաւոնը մերժեց Խրայէլին ազատ արձակել, բայց յետոյ պահանջեց, որ իր երկրէն անյապաղ հեռանան: Այս երկու դէպքերու միջեն եղած ժամանակահատուածին մէջ ան դժկամ զիջումներ առաջարկեց, որոնց մէջ ամենելին Աստուծոյ պատուելու մտադրութիւն չկար, եւ որոնք անընդունելի էին ե'ւ Մովսէսի համար, եւ իհարկէ՝ Աստուծոյ համար:

### Ա. Զիջում 1. «Գացէ՛ք ձեր Աստուծոյն զոհ մատուցէ՛ք այս երկրին մէջ»

Փարաւոնը հաւանաբար յոյս ունէր, որ ինքը այնպիսի զիջումներ կ'առաջարկէ, որոնք կը հաճեցնեն Մովսէսին: Ան խրայէլցիներուն վրայ այնպիսի տպաւորութիւն կ'ուզէր ձգել, թէ ինքը անոնց մեծ առանձնաշնորհում կը պարգևէ:

Այնուամենայնին սա լիովին անընդունելի էր: Մովսէսը մատնանշեց այն դժուարութիւնները, որոնք ակնյայտօրէն խրայէլցիները պիտի հանդիպէին եգիպտացիներու կողմէն: Իրենք զոհեր պէտք է մատուցէին Տիրոջը, բան մը որը եգիպտացիներու համար գարշէլի էր: Անոնց արձագանքը քաղաքացիական անկարգութիւններ պիտի առաջացնէր: Մովսէսը կը պատկերացնէր, թէ ինչպէս եգիպտացիները խրայէլցիներուն պիտի քարկուեն, երբ Վերջիններս զոհ Տիրոջը մատուցանեն:

Սակայն աւելի վատն այն էր, որ խրայէլցիները Եգիպտոսի մէջ տակալին ստրուկի կարգավիճակով պիտի մնային: Երբ զոհաբերութիւններն աւարտէին, փարաւոնը պիտի պնդէր, որ անոնք վերաբառնան իրենց գործին: Անոնց դիրքի բարելաւում չէր սպասուեր: Ուստի Մովսէսը իրաւացիօրէն պնդեց, որ խրայէլցիները պէտք է ենօրեայ

ճանապարհորդութեան երթան դէպի անապատ: Ազատ արձակուելու համար ազգը պէտք էր ամբողջովին բաժնուէր Եզիւսոսէն:

## **Բ. Փոխզիջում 2. «Միայն թէ շատ հեռու չերթաք»**

Քանի որ երկիրը ենթարկուած էր շնածաններու ժանտախտի հարուածին, փարաւոնը ստիպուած էր ինչ-որ կերպ գործել: Այս անգամ ան կարծես թէ աւելի մեծ զիջումի կը դիմէ: Ան այսպէս կ'ըսէ. «Ես ձեզ բող կուտամ որպէսզի երթաք անապատին մէջ ձեր Եհովա Աստուծոյն զոհ մատուցանէք, միայն թէ շատ հեռու չերթաք. ինծի համար աղաչեցէք»:

Ակնյայտ է, որ փարաւոնը կ'ուզէր, որ իսրայէլցինները մօտ ըլլան, որպէսզի կարողանար ստիպէլ իրենց աշխատանքի վերադառնալ: Մովսէսը չ'առարկեց: Մենք չենք զիտէր, թէ ինչու: Արդեօք Մովսէսը զիտէ՞ր, թէ ինչպէս պիտի վարուէր փարաւոնը, երբ շնածանները հեռանային, թէ՞ ան կը հաւատար, որ Աստուծած պիտի պաշտպանի իրենց: Թէ ինչու Մովսէսը չ'առարկեց փարաւոնի առաջարկին այդքան էլ էական չէ: Երբ շնածանները հեռացան փարաւոնը միտքը փոխեց:

Աշխարհին մօտ ըլլալու մէջ միշտ վտանգ կայ: Ան ով մօտ է աշխարհին, ամենայն հաւանականութեամբ պիտի երթաք այնտեղ: Ղովտը սիսալուեցաւ Սողոմի մէջ մնալով, երբ Աբրահամը գերութիւննեն ազատեց զինք: Ի վերջոյ, Իր վկայութիւնը ամբողջութեամբ աղաւաղուեցաւ:

## **Գ. Փոխզիջում 3. Միայն ոմանց թոյլ տուաւ հեռանալ**

Փարաւոնը Մովսէսին ըսաւ, որ իրենք կրնան երթալ ու ծառայել իրենց Աստուծոյն: Բայց ան կ'ուզէր իմանալ, թէ ովքեր պիտի երթան: Երբ իմացաւ, որ բոլորը պէտք է երթան, ան պայմաններ առաջ քաշեց: Միայն տղամարդկանց թոյլ տուաւ երթալ ու Տիրոջը ծառայել:

Սա նորէն ընդունելի տարբերակ չէր, քանի որ տղամարդիկ շուտով պիտի վերադառնային իրենց ընտանիքներուն: Ժողովուրդը դեռ գերութեան մէջ պիտի մնար, եւ ոչ մէկ երաշխիք չկար, որ դաժան ստրկութեան պայմանները որեւէ կերպ կը թոյլնային:

Այնուամենայնիւ Մովսէսը ստիպուած չէր արձագանքել փարաւոնի պայմաններուն: Ան վտարուեցաւ փարաւոնի ներկայութիւնէն:

## **Դ. Փոխզիջում 4. «Միայն ձեր հոտերն ու արջառները մնան»**

Փարաւոնը կը գիտակցէր, որ պէտք է որոշ փոխզիջումներու երթայ. «Գացէ՛ք, պաշտեցէ՛ք Եհովան, միայն ձեր հոտերն ու արջառները մընան. ձեր ընտանիքներն ալ ձեզի հետ բող երթան»: Երեք օրուայ թանձր խաւարի սարսափելի փորձառութիւննեն ետք փարաւոնը կը հասկնար, որ պէտք է ինչ-որ բան ձեռնարկէ: Բայց ան տակաւին Վերահսկողութիւն կ'ուզէր բանեցնել խրայէցիներու վրայ: Այսպիսով որոշ սահմանափակումներ մնացին: Իրենք կրնային իրենց զաւակներու հետ երթալ, սակայն հոտերն ու արջառները պէտք է մնային Եգիպտոսի մէջ:

Փարաւոնը գիտէր, որ խրայէցիներուն անհրաժեշտ են իրենց հոտերը՝ զոհ մատուցելու համար: Բայց ան նաեւ գիտէր, որ իրենք չէին կրնար ընդմիշտ բողնել իր երկիրը՝ առանց իրենց հոտերու և արջառներու: Խրայէցիները հովի էին Աքրահամի ժամանակներէն ի վեր, եւ հոտերն ու արջառները անոնց կեանքի անբաժան մասը կը կազմէր: Հերթական անգամ փարաւոնը ամէն ինչ կ'ընէր խրայէցիներուն որպէս ստրուկ պահելու համար:

### **Ի՞նչ կը պահանջէր Տերը**

Աստուած կ'ուզէր, որ Իր ժողովուրդը Եգիպտոսէն ամրողութեամբ դուրս գար: Ան անոնց համար ապագայ ծրագրած էր, որտեղ իրենք պիտի ըլլային այն ժողովուրդը, որու միջոցով փրկութեան պատզամը պիտի գար: Բայց իրենք պէտք է լիովին զատուիին Եգիպտոսի կուապաշտական ազդեցութիւններէն: Խրայէցիները ստիպուած էին ամրողութեամբ լրել Եգիպտոսը: Միայն այդ ժամանակ իրենք պիտի կարողանային իրականացնել իրենց համար Աստուծոյ նախատեսած նպատակը:

### **Փոխզիջումներ Մովսէսի կողմէն**

Մովսէսը կը գիտակցէր, որ փարաւոնը ամէն ինչ պիտի ընէ խրայէցիներուն, որպէս ստրուկ պահելու համար: Աստուած յստակ ըսած էր իրեն, որ փարաւոնը թոյլ պիտի չտայ խրայէցիներուն հեռանալ նոյնիսկ «հզօր ձեռքով»: Բայց Մովսէսը նաեւ գիտէր, որ Աստուծոյ ծրագիրը Իր ժողովուրդի ամրողական արձակումն էր: Հետեւաքար Մովսէսը ոչ մեկ փուլին որեւէ զիջում չըրաւ փարաւոնին: Իր առաջին պար-

տականութիւնը Տիրոջը հաւատարիմ մնալն էր: Ան հաւատարմօրէն ներկայացուց Տիրոջ պահանջները եւ չընդունեց փարաւոնի փոխօփ-ջումները:

## **Այսօր՝ մեզ համար**

Մենք պէտք է քաջ գիտակցինք, որ սատանան չ'ուզէր կորսնցնել մեր վրայ վերահսկողութիւնը կամ, որպէս այլընտրանք, ան կ'ուզէ ունենալ որոշակի ազդեցութիւն, որպէսզի արդիւնաւէտ չըլլանք Տիրոջ համար մեր վկայութեան մէջ:

Որքանո՞վ խոռուած ենք աշխարհի գործերուն մէջ: Տիրոջ փափազն այն է, որ մենք հաւատարիմ մնանք այն պատուերներուն, որոնք Ան տուած է մեզ: Արդեօք կը նեն՞ք այնպէս, ինչպէս Ան մեզ յանձնարարած է, թէ՞ ոչ:

Տոն Սթորմը



## **Օգնութիւն կը փնտոեմ**

- Ես մի քանի տարուայ հաւատացեալ եմ եւ գիտեմ, որ Տէրը կ'ուզէ, որ լիովին վստահիմ Իրեն եւ կեանքս Իրեն յանձնեմ, սակայն այդ պարզապէս չի ստացուիր հետս:
- Ուրեմն կը ներէք, ես չեմ կրնար օգնել ձեզ, քանի որ դուք օգնութիւն չէք ուզեր:
- Անշուշտ ես օգնութիւն կ'ուզեմ: Ես քեզի հետ չէի զրուցեր, եթէ կարիք չունենայի:
- Տէր Յիսուսը կրնայ օգնել քեզ, բայց դուն չես ուզէր, որ Ան ընէ այդ:
- Ի՞նչ ի նկատի ունիս: Անշուշտ ես կ'ուզեմ, որ Ան ընէ այդ:
- Բայց Ան էր, ով կանչեց քեզ Իրեն վստահելու ու քու կեանքդ իրեն յանձնելու: Իր խոստումն է, որ եթէ կեանքդ կորսնցնես, պիտի գտնես այն:

- Ես այդ գիտեմ, բայց կարծես թէ միայն տեսութիւն ըլլայ: Ես չեմ կրնար ընել այդ:
- Եթէ այդ ընելու կարողութիւնը չունենայիր, ապա ինչո՞ւ Տէրը պիտի խնդրէր քեզի ընել այդ: Լաւ հայրը իր զաւակին չի խնդրէր անհնարին բան ընել, Տէրն ալ չէ ըսած, որ ընես անհնարին բան մը:
- Բայց ես չեմ կրնար այդ ընել: Այն չափազանց դժուար է: Ես հարիւր անգամ փորձած եմ:
- Եթէ չես կրնար ընել այդ, ուրեմն Տէրը սխալուած է: Եթէ չես ընել այդ, ուրեմն դուն սխալուած ես: Ջու կարծիքովդ ո՞վ է սխալ:
- Վերջ: Դուն ուղղակի բառախաղ կ'ընես:
- Ո՛չ, բառախաղ չեմ ընել, եւ ասիկա խաղ չէ: Եթէ իրականութեան մէջ կեանքդ շյանձնես Իրեն, ով այնքան սիրեց քեզի, որ մահացաւ քեզի համար, ուրեմն դուն պատճառ մը ունիս, եւ դուն ինքդ պէտք է այդ պատճառը բացայատես: Երբ կ'ըսես, թէ չես կրնար հնազանդիլ Իրեն, ապա իրականութեան մէջ քու իրավիճակիդ համար Աստուծոյ կը մեղադրես, եւ այդպէս ընելը ոչինչով օգուտ չի բերէր քեզ:
- Ես իսկապէս կ'ուզեմ ապրիլ Իր համար, բայց այդ դժուար է: Բոլորը գիտեն, որ դժուար է:
- Բոլորը բացի Յիսուսէն: Ան ըսաւ. «Լուծ քաղցր է, եւ իմ քեռս՝ թեթև»:
- Ուրեմն դուն կ'ուզես ըսել, թէ ես կեանքս չեմ յանձնած Իրեն, քանի որ պարզապէս չեմ ուզէ՞ր այդպէս ընել:
- Այո՛, այդպէս է, եւ դուն ունիս պատճառ մը, կամ զուցէ պատճառներ, թէ ինչո՞ւ չես ուզէր:
- Եւ որո՞նք են ասոնք:
- Սա բան մըն է, որ Տէրը կրնայ ըսել քեզի: Խնդրէ՛ Իրեն ցոյց տալ քեզ այն, ինչ կայ քու սրտիդ մէջ. այն, ինչ դուն աւելի շատ կը գնահատես, բան Իրեն:

- Ես կը վախնամ: Բայց ի՞նչ կ'ըլլայ, եթէ խնդրեմ Իրեն ցոյց տալ զիս, եւ երբ իմանամ, տակաւին չ'ուզեմ ձերքազատուիլ ատկէ:
- Ան անշուշտ ապաշխարութեան հոգի կը շնորհէ քեզ, եթէ կամենաս դիմել Իրեն, սակայն Ան չի անտեսէր քու կամքդ: Այդ պէտք է ըլլայ քու ընտրութիւնդ: Բայց եթէ չփառես Իրեն, ապա քու ընտրութիւնդ արդեն տրուած է: Այդպէս դուն ցոյց կուտաս, որ խաւարն աւելի շատ կը սիրես, քան լոյսը:
- Ի՞նչ ընեմ: Ես զիս թակարդի մէջ կը զգամ:
- Ասսունոյ սիրոյ թակարդին մէջ, ով ընտրեց քեզ ու կանչեց Իր փառքին մէջ ըլլալու: Այս կոչումը լուրջ խնդիր է, ոչ թէ ժամանացային զրադակունք, որուն կարող ես թերեւութեամբ մօտենալ: Իսկ ինչո՞ւ պէտք է լուրջ վերաբերուիս: Քանի որ, Ան հաւատարիմ Հովհիկ պէս պատրաստ է առաջնորդելու քեզ այն ամէնուն մէջ, ինչ Ան ծրագրած է քեզի համար: Ինչո՞ւ հեռանալ Իրմէ, ինչո՞ւ նահանջել ինչո՞ւ դիմադրել Իրեն:

«Եկէք ինձի, բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ եւ Ես ձեզ պիտի հանգչեցնեմ: Իմ լուծու ձեր վրայ առէք եւ Ինձնէ սորվեցէք՝ որ հեզ ես ու սրտով խոնարի եւ ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք. Վասն զի Իմ լուծու քաղցր է եւ Իմ քեռու թեթեւ»» (Մատթ. 11:28-30):

Նէյլ Պուրման



«Այս աշխարհին մէջ հարուստ եղողներուն պատուէր տուր որ չիպարտանան եւ անստոյգ հարստութեան վրայ յոյսերնին չդնեն, հապա կենդանի Աստուծոյ վրայ, որ ամէն բան մեզի առատօրէն կու տայ վայելելու, բարիք գործեն, բարի գործերով հարստանան, առատաձեռն եւ ուրիշին պիտոյքներուն հաղորդակից

ըլլան: Հանդերձեալին համար կարենան անձին բարի հիմ դնել,

որպէս զի յափառենական կեանքը ձեռք ձգեն»:

**Բ Տիմ. 6:17-19**

## Սուրբ Հոգոյն ներգործութիւնը

### Ա Յովհ. 4:1-6

**Ս**Յովհ. 4:1-6 համարները կը խօսին Սուրբ Հոգոյն ներկայութեան, առաջնորդութեան եւ գօրութեան մասին քրիստոնեային հոգիէն ներս: Ան որ Աստուծմէ է Քրիստոսի Հոգին ունի իր մէջ եւ յաղբական կեանք կ'ապրի այս աշխարհի մէջ, որովհետեւ մեծ է Անիկա որ քրիստոնեային մէջ է քան թէ անիկա որ աշխարհի մէջ է:

Անիրաժեշտ է գիտնալ Սուրբ Հոգոյն կարեւորութիւնը եւ Անոր դերը մեր կեանքերէն ներս: Սուրբ Հոգին է որ մեր կեանքերը կը փոխէ: Երբ Սուրբ Հոգին չ'ունինք՝ կը նմանինք Պետրոս առաքեալին՝ Քրիստոսի աշակերտին, որ վախճառվ մարդոցմէ, ուրացաւ Քրիստոսը երբ զԱյս դատէին: Պօղոս առաքեալը կեանքի մեծ յեղաշրջում ունեցաւ, երբ Սուրբ Հոգին սկսաւ ներգործել իր մէջ: Մենք ալ կրնանք Քրիստոսը ընդունի իրեն մեր Տերը, սակայն փոփոխութիւն պիտի չ'ունենան մեր կեանքերը առանց Սուրբ Հոգոյն ներգործութեան: Սուրբ Հոգին է, որ կ'առաջնորդէ մեր քայլերը, կը կառավարէ մեր խորհուրդները եւ կայող կը դարձնէ մեզ իր գօրութեամբ գործելու: Ի՞նչ սքանչելի խոստում է գիտնալ որ «Ան որ մեր մէջ է աւելի գօրաւոր է քան ան որ աշխարհի մէջ է»:

Աստուծոյ Խօսքին մէջ շատ օրինակներ կը կարդանք Սուրբ Հոգոյն կատարած գործերուն մասին մարդոց կեանքերէն ներս: Գործը Սոաքելոց 3-րդ գլխուն մէջ կը կարդանք կաղ մարդու մը մասին որ ամէն օր տաճարին Գեղեցիկ Դրան քով կը դնէին զինք, որպէսզի տաճարը մտնողներէն ողորմութիւն խնդրէ: Պետրոս եւ Յովհաննէս առաքեալները տաճարը մտնելու վրայ էին երբ տեսան այս կաղ մարդը ու մօտենալով անոր ըսին. «Մեզի նայէ»: Կաղը կը յուսար անոնցմէ քան մը առնել երբ Պետրոս ըսաւ, «Արծար ու ուկի չ'ունիմ, հապա ինչ որ ունիմ՝ զայն քեզի կուտամ. Յիսուս Քրիստոսի անունովը Ելիք ու քալէ», ու անոր ձեռքէն բռնելով վերցուց զանիկա ու կաղը սկսաւ քալել ու ցատկել ու զԱստուծ օրինել: Ո՞վ կատարեց այս հրաշքը, Պետրոս առաքեա՞լը, թէ՞ Յիսուսի Հոգին: Միթէ ինք չէ՞ր որ վախճառվ մարդոցմէ ուրացաւ Յիսուսը, սակայն երբ Աստուծոյ Սուրբ Հոգին ստացաւ Պէնտէկոստէի

օրը իր կեանքը լման փոխուեցաւ: «Քո Վատիս» (որ կը թարգմանուի՝ «Ո՞ւ կ'երթաս») վերնագրով գրքէ մը հետեւեալ դրուազը կը յիշեն Պետրոս առաքեալի մասին: Երբ Հռովմի կառավարութիւնը պիտի ձերքակալէր Պետրոս առաքեալը զինք խաչելու համար բարեկամները պնդեցին որ քաղաքէն հեռանար: Առաքեալը մինչ կը հեռանար, ճամբուն վրայ տեսիլք մը տեսաւ, Յիսուս երեւցաւ իրեն ու իր դիմացէն կը քալէր: Պետրոս առաքեալ կը հարցնէ Յիսուսի. «Ո՞ւ կ'երթաս»: Յիսուս կը պատասխանէ. «Ես Հռովմ կ'երթամ քու տեղի խաչուելու»: Պետրոս առաքեալ՝ ես կը դառնայ ու Հռովմ կ'երթայ: Երբ զինք պիտի խաչէին, անոնց կ'ըսէ. «Ես արժանի չեմ Յիսուսի նման խաչուելու», ու զինք ուորերն ի վար կը խաչեն: Փոփոխութիւնը առաքեալին կեանքին մէջ շատ մեծ էր:

Երբ կը կարդանք Գործը Առաքելոցը, առաքեալներուն գործերը չեն որ կը կարդանք, այլ Սուրբ Հոգույն գործը առաքեալներուն մէջ: Սուրբ Հոգույն գորութիւնը, կատարած թժկութիւնները, հրաշքները տակավին կը պատահին այսօր իսկ, որովհետեւ անոնք միայն առաջին դարուն չեն պատկանիր, քանի որ Քրիստոս նոյնն է երեկ, այսօր ու յափառեան: Առաքեալները միայն գործիքներ էին Աստուծոյ ձեռքը եւ Յիսուս այսօր կրնայ ընել նոյն բաները Սուրբ Հոգույն գորութեամբը: Յիսուս ըսաւ. «Ձեզ պիտի չքողում, այլ՝ ձեզի համար մխիթարիչ մը պիտի դրկեմ, ու ձեր կեանքերը փոխուելով ինձի համար վկաներ պիտի ըլլաք»: Առանց Սուրբ Հոգույն գորութեան ազդեցիկ վկաներ չենք կրնար ըլլալ Յիսուս Քրիստոսի համար: Կեանքի փոփոխութիւնը մեծ է անոնց համար որոնք Սուրբ Հոգիին գորութիւնը ունին եւ Անոր համար կ'ապրին: Յիսուս ըսաւ. «Սուրբ Հոգին ձեր վրայ՝ եկած ատենը գորութիւն պիտի առնէք ու ինձի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի ու բոլոր Հրեաստանի ու Սամարիայի մէջ, մինչեւ երկրի ծայրերը»: Յիսուս այսպէս խոստացաւ մեզի. «Եթէ զիս կը սիրէք իմ պատուիրանքներս պահեցեք. Ես ալ Հօրը պիտի աղաչեմ ու ձեզի Մխիթարիչ մը պիտի տայ որպէսզի յափառեան ձեր հետ բնակի»:

Յիսուս խոստացաւ, որ Սուրբ Հոգին մեր մէջ պիտի մնայ բայց ինչպէ՞ս կրնայ ըլլայ, որ Սուրբ Հոգին կը նեղանայ եւ կը հեռանայ անձէ մը: Սուրբ Գրքին մէջ Սատու թագաւորին մասին կը կարդանք որ Աստուծոյ Հոգին իր վրայ եկաւ, սակայն վերջաւորութեան կը կարդանք

որ իր մեղքերուն պատճառով Աստուած Սաւուլի աղօքքները չեր լսեր ու չեր պատասխաներ որովհետեւ Սուրբ Հոգին զինք թողած էր: Սատուղ բազաւոր շատ ցաւալի վերջաւորութիւն ունեցաւ անձնասպան ըլլալով: Մենք մեր ուժերով չենք կրնար ապրիլ մեր կեանքերը Աստուծոյ համար: Տեր Աստուած մեզի Սուրբ Հոգին խոստացած է: Աշխարհ ինչպէ՞ս պիտի զիտնայ որ մենք զԻնք կը սիրենք, միայն այն ատեն երբ զիրար սիրենք: Արդեօք ինչպէ՞ս կրնանք սիրել մէկը որ մեզի հակառակ է, ինչպէ՞ս կրնանք աղօքել մէկու մը համար երբ մեզ կ'ատէ: Այս բոլորը մեր մարդկային ուժերով չենք կրնար ընել, այլ՝ միայն Սուրբ Հոգույն միջոցաւ որ մեզի կը շնորհէ փոփոխութիւն, կուտայ աստուծային սէր՝ սիրելու մեր հակառակորդները: Գործը Առարելոցի մէջ կը կարդանք Սողոսի (Պօղոս) եւ Շիղայի մասին թէ ինչպէս բանտ դրուեցան ու ծեծուեցան, եւ անոնք աղօքք կ'ընէին ու երգելով փառը կուտային Աստուծոյ եւ իրենց պատճառով բանտապեսն ու իր ընտանիքը քրիստոնեայ դարձան: Ինչպէ՞ս կրնայ քրիստոնեայ մը այդպիսի կեանք մը ապրիլ երբ ցաւերու մէջն կ'անցնի: Մեծ թիւվ հայեր ցեղասպանութեան ահոելի տարիներուն զԱստուած հարցուփորձնեցին թէ ինչպէ՞ս արդար Աստուած մը կ'արտօնէ ցեղասպանութիւնը: Աշխարհի բոլոր նեղութիւններն ու դժուարութիւնները վաղանցիկ են եւ Յիսոս խոստացած է մեզի հետ ըլլալ ամէն ժամանակ: Ինչպէս Աստուած Պօղոսն ու Շիղան գործածեց բանտապետին ընտանիքը փրկելու, նոյնապէս ալ մենք երբ դժուարութիւններէ կ'անցնինք եւ չենք հասկնար, Աստուած կ'արտօնէ եւ կրնայ այդ փորձառութիւնը բարիի փոխելով մեզ գործածել ուրիշի մը օգտակար ըլլալու: Դժուար է հասկնալ, բայց երէ հաւատանք որ աւելի զօրաւոր է Ան որ մեր մէջ է քան ան՝ որ աշխարհի, ինչ ալ պատահի մեր կեանքին մէջ Սուրբ Հոգին իր զօրութիւնը պիտի շնորհէ: Երէ հաստատ մնանք մինչեւ վերջ, Տերը պիտի ըսէ. «Ապրիլս, բարի ու հաւատարիմ ծառայ»: Առանց Յիսոս Քրիստոսի չենք կրնար մեր մեղքերուն քաւութիւն գտնել, եւ առանց Սուրբ Հոգույն զօրութեան չենք կրնար այս քրիստոնեական կեանքը ապրիլ մինչեւ մեր կեանքին վերջը:

Յիսոս, համբարձման օրը, վերջին պատուիրանք մը տուալ Իր աշակերտներուն. «Ապասեցէ՛ք, Երուսաղէմէ մի՛ հեռանաք մինչեւ որ վերէն ստանաք այդ զօրութիւնը»: Առանց Սուրբ Հոգույն ներգործութեան չենք կրնար վկայել Յիսոս Քրիստոսի համար: Երբ առաքեալներուն կեան-

քը սերտենք պիտի տեսնենք թէ առանց Սուրբ Հոգիոյն զօրութեան բան մը չկրցան ընել մինչեւ Պենտէկոստի օրը, երբ Սուրբ Հոգին իրենց վրայ իշաւ:

Մատք. 12:31–32-ին մէջ կը կարդանք որ ամէն մեղք (նոյնիսկ Քրիստոսի դէմ եղած մեղքը) պիտի ներուի մարդոց, բայց Սուրբ Հոգիոյն դէմ եղած մեղքը պիտի չներուի ոչ այս աշխարհի, ոչ ալ գալու աշխարհին մէջ: Այս ըսել է որ առանց Սուրբ Հոգիոյն տնօրինութեան ու Անոր ներգործութեան, մենք չենք կրնար Յիսուսի գալ ու փրկուիլ ու զինք իրեւ մեր Տէրը ընդունիլ: Երբ Սուրբ Հոգիոյն դէմ ելլենք, Քրիստոսը ընդունելու առիթը կը կորսնցնենք:

Տէրը շնորհէ որ ընդունելով Սուրբ Հոգին կարենանք մեր կեանքերը իր զօրութեամբ ապրիլ ու գործել իր Փառքին համար:

Ծերակուտական՝ Դաւիթ Տօքարեան  
Քաղուած՝ «Հատընտիր հոգեւոր պատգամներ» գիրքն

## **Հայաստանի ՄԱՀ**

«Երանի՝ այն ազգին, որուն Աստուածը Տէրն է» (Սաղ. 33:12): Տէր Յիսուսը իր յարութիւնէն ետք Պետրոսի հետ կարեւոր խօսակցութիւն ունեցաւ: Տէրը ըսաւ. «Եթէ զիս կը սիրես, ապա ծառայութեանդ մէկ բաժինը պէտք է ըլլայ իմ գառնուկներուն արածեցնելը (կերակրելը)»: Փոքրիկները յաճախ չեն կրնար իմքնուրոյն սնուիլ եւ մեծերու օգնութեան կարիքն ունեն: Տիրոջ գառնուկներուն կերակրելը եւ անձամբ գաւառ մը պաղ ջուր խնցնելը մեծ եւ կարեւոր աշխատանք է, որու անհրաժեշտութիւնը տեսնել եւ հնազանդիլ պէտք է:

Սեր շրջապատին մէջ գտնուող մանուկները կ'ապրին այնպիսի ժամանակներու մէջ, որը լի է բացասական խօսքերով եւ վնասակար արարքներով: Անոնց կը սորվեցնեն, որ անձնասէր եւ ինքնավատահ ըլլալը ճիշտ է, ազատ են իրենց որոշումներու մէջ, ճշմարտութիւնը յարաբերական է եւ չկայ բացարձակ ճշմարտութիւն, կրնան չհնազան-

դիլ իրենց ծնողներուն, քանի որ անոնք յաճախ կը խառնուին իրենց կեանքին մէջ, քանի որ չեն գիտէր իրենց սահմանները: Կը խրախուսուի դաժանութիւնը: Խեղաթիւրուած է ընտանիք հասկացութիւնը: Մանուկներուն եւ պատանիներուն կը քաջալերեն, որ կարող են իրենց նարմնի հետ ընել այն, ինչ կ'ուզեն, քանի որ այն իրենց կը պատկանի: Իրենք կ'իյնան չարի կողմէն վերահսկուած ազատութեան կոչուածի թակարդը եւ կը վնասեն իրենց անձները: Խեղճ մանուկները կը կարծեն, թէ ազատ են, սակայն իրենք վտանգուած են, անպաշտպան ու գերեվարուած չարի նպատակին, այսինքն քայլ առ քայլ հեռանալ Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ ստեղծուած եւ Աստուծոյն փառք բերող մարդ ըլլալեն:

Անշուշտ, այս օրերուն մէջ բաւական դժուարացած է մանուկներուն Տիրոց Խօսքը հասցնելը, սակայն եկեղեցիները յաճախ արդարացումներ կը փնտռեն եւ կը փորձեն մեղադրել աշխարհին ու սատանային: Կարիք կայ արքնանալու եւ հոգեւոր կեանքին լրջութեամբ վերաբերուելու, որ կարողանանք ճշմարտութեամբ ապրիլ եւ հետեւիլ ճշմարիտին:

Շատերս կը բաւարարուինք աւելի հանգիստ կամ դիւրին ծառայութիւններ ընելով: Աղօքքը մանուկներու աւետարանչութեան ամենակարեւոր բաժինն է, սակայն պէտք է ոչ միայն աղօքենք, այլև աղօքքով գործենք: Յովի. 5:1-15-ի մէջ կը հանդիպինք մարդու մը, ով 38 տարի հիւանդ էր: Իրեն կը գտնենք Բերիեզդայի աւազանին մօտ՝ իր մահճին պառկած: Աս դանդաղաշարժ դարձած էր, քանի որ մկանները բոյլցած էին՝ երկար ժամանակ հիւանդ եւ պառկած մնալէ: Շատերս Ժամանակին արագ կը վազէինք, բայց հիմա դանդաղաշարժ դարձած ենք: Երբ քիչ կը շարժուինք, մեր մկանները կը տկարանան եւ բազմաթիւ հիւանդութիւններու պատճառ կը դառնան: Կարիք ունինք Տիրոց միջամտութեան եւ Իրեն հնազանդելու:

Սուրբ Հոգիի օգնութեամբ ոտքի կանգնինք. բող զօրանան մեր հոգիները, որ վազենք Տիրոց համար:

Մեծ սիրով՝  
Հայաստանի Մանկանց աւետարանչութեան ընկերակցութիւն

## Յարութիւնը կարելի չէ կեցնել

**Գ**երմանիոյ մէջ գերեզման մը կայ որուն վրայ հսկայ մարմարէ ու կրանիտէ քարեր իրարու կպցուած են և ծանր երկարէ ճարմանդներով ամրացուցած են: Ասիկա կը պատկանի կնոջ մը որ չէր հաւատար մեռելներու յարութեան: Սակայն զարմանալիօրէն ան իր կտակին մէջ փափաք յայտնած էր իր գերեզմանը այդքան ապահով ընել որ եթէ նոյնիսկ յարութիւն տեղի ունենար, իրեն չի հասներ: Անոր շիրիմնաքարին վրայ արձանագրուած էր «Այս գերեզմանը երբեք պէտք չէ բացուի»:

Ժամանակի ընթացքին քարերուն տակ պահուած հունտ մը, սկսաւ տակէն աճիլ: Կամացուկ մը ան հողէն դուրս եկաւ: Երբ կոճղը հաստացաւ, քարի մեծ կտորները շարժեցան այդպէս որ երկարեայ ճարմանդները քակուեցան: Պատիկ հունտը մեծ ծառ մը եղաւ եւ քարերը մէկդի իրեց:

Հունտին պարունակած կենդանի հուժկու օրութիւնը պարզ ցոլացումն է այդ Աստուածային օրեւու ստեղծագործ խօսքին որուն միջոցով օր մը, պիտի կենդանանայ բոլոր անոնք որ գերեզմաններուն մէջ են: Ան նաեւ պիտի կենդանացնէ բոլոր անոնք որ ծովերու մէջ ընկրումած են, այրած են կամ այլ կերպով կործանած են: Ասիկա ընել հարց չէ Անոր համար որ ոչինչէն, միայն խօսքով, ստեղծեց ամրող տիեզերքը: Անհաւատութիւնը կարող չէ կեցնել յարութիւնը: Սակայն յարուցեալ Քրիստոսի մէջ եղած հաւատքը կը բանայ օրինութեան դրներ եւ իր յարութիւնը մեզի համար կ'ապահովէ փառաւոր մարմին մը եւ երկնային տուն մը: Նոր մարմիններով վերստին պիտի միանանք մեր յարուցեալ հարազատներուն, Յիսուսի հետ յախտեան ապրելու:

Պողոս առաքեալ կ'ըսէ. «Յոյս ունին առ Աստուած... Թէ մեռելներուն յարութիւն պիտի ըլլայ, թէ՝ արդարներուն եւ թէ՝ մեղաւորներուն: Եւ ես այս բանին համար կը ջանամ որ ամէն ատեն մաքուր խղճմտանք ունենամ Աստուծոյ եւ մարդոց առջեւ»:

Քաղուած «Աւետարեր ծիրենին» գիրքէն